# Էդգար Ղազարյանի դասախոսությունը Քաղաքական դասընթացների դպրոցում

04.11.2013

Ջերմուկում անցկացվող Եվրոպայի Խորհրդի քաղաքական դասընթացների Երևանյան դպրոցի հերթական սեմինարի ընթացքում 2013 թվականի նոյեմբերի 3-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Էդգար Ղազարյանը հանդես է եկել դասախոսությամբ՝ «Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումը եվրաինտեգրման համատեքստում» թեմայով: ՔԴԵԴ ունկնդիրներին Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման արդի միտումները և մարտահրավերները ներկայացնելուց հետո Է.Ղազարյանը պատասխանել է նաև նրանց հուզող հարցերին: